ՄԱՐԶԻ ԱՐՓՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77^{1}, 77^{2}, և 77^{3} հոդվածների և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Առաջարկել մարզի Արփունք համայնքի ղեկավարին՝

1) ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի պահանջներով պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման ուղարկել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող նորմատիվ իրավական ակտերը.
2) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող իրավական ակտն իր վերնագրով, նախաբանով, կառուցվածքով և իրավական տեխնիկայի կանոններով համապատասխանեցնել <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ, 40-րդ և 41-րդ հոդվածների պահանջներին.
3) իրավական ակտերում փոփոխություններն ու (կամ) լրացումներն իրականացնել <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով.
4) ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով մրցութային եղանակով համալրել համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետի /ծածկագիր՝ 3.1-1/ թափուր պաշտոնը.
5) ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2008թ. օգոստոսի 10-ի և 2008թ. սեպտեմբերի 10-ի <<Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների անհատական կազմերը հաստատելու մասին>> N 5 և N 8 որոշումները.
6) ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով փոփոխություններ և լրացումներ կատարել համայնքի ղեկավարի 2010թ. մարտի 16-ի N 19 որոշմամբ հաստատված համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի պաշտոնի անձնագրի հավելված 1-ի 6-րդ՝ <<Գիտելիքներ և հմտություններ>> գլխի 10-րդ կետի <<ա>> ենթակետում և 7-րդ՝ <<Իրավունքներ և պարտականություններ>> գլխի 11-րդ կետի մեջ.
7) համայնքային ծառայողների անձնական գործերը վարել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006թ. նոյեմբերի 7-ի

<<Համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգը սահմանելու մասին>> N 20-Ն հրամանով հաստատված կարգի պահանջներին համապատասխան.

8) համայնքային սեփականության հողատեսքերը վարձակալության տրամադրել Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի պահանջներին համապատասխան.
9) սույն որոշմամբ ներկայացված առաջարկությունները քննարկել համայնքի ավագանու նիստում և ձեռնարկված միջոցների ու կատարված աշխատանքների մասին գրավոր տեղեկացնել մարզպետին մինչև 2012թ. հունվարի 20-ը:

2. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչությանը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ն. ՊՈՂՈՍՅԱՆ